ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2022 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2022թ. ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի կողմից տարվող աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի հիմնադրման 45-ամյակի արժանավայել դիմավորմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանը շարունակել է համագործակցել կրթահամալիրի ծառայությունների հետ:

ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի հիմնադրման 45-ամյակը նշելու համար մշակվել է անհրաժեշտ ծախսերի և տեխնիկական նախապատրաստման աշխատանքների պլան և հանձնվել Կրթահամալիրի ծառայություններին:

Տպագրվել է թանգարանի վերաբերյալ 6 էջից բաղկացած հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով բուկլետ: Թանգարանում այցելությունները լուսաբանվել են կրթահամալիրի edupolise.am և police.am կայքէջերում:

Կրթահամալիրի «Պատիվ ունեմ» պաշտոնաթերթում հրապարակվել են «Կարմիր աստղի շքանշանակիր», «ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը 45 տարեկան է» հոդվածները: Նշված պաշտոնաթերթի 25 համար հանձնվել է ոստիկանության Շիրակի վետերանների խորհրդին:

Թանգարանի մասին պատմող բուկլետները բաժանվել է դպրոցներին, Կրթահամալիրի սովորողներին և ոստիկանության Կենտրոնական բաժնին:

Աշխատանքներ են տարվել նաև թանգարանի ցուցադրական ֆոնդը համալրելու ուղղությամբ: Թանգարանում տեղադրվել է ՆԳՄ մարմինների և ստորաբաժանումների 1984-85 թթ. պատի թերթեր, ՀՍՍՀ ՆԳՄ մարմինների և ստորաբաժանումների վերաբերյալ 1961-1992թթ. 3 տասնյակ ալբոմներ:

Ցուցադրվել են ՀՍՍՀ ՆԳՄ Շտաբի պետ, հայրենական պատերազմի մասնակից, միլիցիայի գնդապետ Սուրեն Ջեյրանյանի հանձնարարությամբ 1981թ. օգոստոս ամսին հանրապետության ՆԳ բաժինների կողմից ՆԳՄ ուղարկված ՀՄՊ-ում զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշարձանների 30 լուսանկար:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարան են այցելել շուրջ 450 անձ:

Այդ թվում՝ Լիտվայի հանրապետության ՆԳՆ ոստիկանության դեպարտամենտի ներկայացուցիչները՝ գլխավոր կոմիսար-գեներալ Ռենատաս Պոժելայի գլխավորությամբ, ՄԱԿ-ի փորձագետների խումբը, Չեխիայի հանրապետության անվտանգության ուժերի գլխավոր վարչության պատվիրակությունը բրիգադի գեներալ Ռադիմ Դրագունի գլխավորությամբ, Վրաստանում Գերմանիայի դեսպանության ոստիկանության կցորդ Դիտրիխ Էբերսը, Բելոռուսիայի հանրապետության ՆԳՆ պատվիրակությունը՝ կիբեռհանցավորության հակազդման ԳՎ պետի տեղակալի գլխավորությամբ և ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ ներկայացուցիչները, ԱՄՆ Պետքարտուղարության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի Եվրոպայի և Ասիայի ծրագրերի ներկայացուցիչները, Ֆրանսիայի Հանրապետության Փարիզի քրեական ոստիկանության տարածաշրջանային վարչության փորձագետ Ա.Պելկատը, Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ գյուղի, Երևան քաղաքի

Ջոն Կիրակոսյանի անվան, թիվ 91, Գոգոլի անվան դպրոցների աշակերտները, Երևանի պետական հումանիտար քոլեջի սովորողները:
Հաշվետու ժամանակաշրջանում թանգարան են այցելել նաև Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական պատրաստականության ուսուցման 1-ին և 3-րդ դասակի սովորողները՝ ուսումնական կենտրոնի ընդհանուր պատրաստականության կրթաճյուղի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Ալեքսանյանի գլխավորությամբ, քոլեջի 1-ին կուրսի, ակադեմիայի 1-ին կուրսի, 2-րդ և 3-րդ խմբերի սովորողները, պայմանագրային դասախոս՝ պատմական գիտությունների դոկտոր Ռ. Սահակյանի գլխավորությամբ:
Նշված ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում է եղել նաև թանգարանի կազմակերպչական գործունեությունը:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 17.03.2022թ. թիվ 125-Ա հրամանով ս/թ. մարտի 21-ից մինչև ապրիլի 11-ը կատարվել է թանգարանի ֆոնդերի գույքագրում: Կրթահամալիրի պետի կողմից հաստատվել է գույքագրման ակտը, որի հիման վրա թանգարանի ֆոնդերի թիվը կազմել է 5454 միավոր:

ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի
առաջատար մասնագետ

Դ.Հովսեփյան

« » հունվարի 2023 թ.